2.

Ո՞վ էր Յակովբ Կաթուղիկոսը.—

Նոր–Ջուղայեցի էր նա, մի հարուստ եւ ունեւոր ընտանիքի զաւակ։ Ծնուած պիտի լինի 1598 թ., որովհետեւ յայտնի է, որ նա մեռել է 1680 թ., 82 տարեկան հասակում։ Դեռ երիտասարդ տարիքում դառնում է վարդապետ եւ իբրեւ քարոզիչ շրջում է Հայաստանի շատ մասերում։ Այնուհետեւ մի առ ժամանակ վանահայրութեան պաշտօն է վարում Դարաշամբի (Հին–Ջուղայի մօտ) Ս. Ստեփաննոսի վանքում եւ մեծ նեղութիւններով հիմնովին վերանորոգում է վանքը իր պատկան բոլոր շինութիւններով, «ծախեալ բազում դրամս եւ աշխատեալ ամս տասն»։

Պէտք է այստեղ արձանագրել մի խոշոր եւրեւոյթ, որի ազդեցութիւնը Ջուղայեցու վրայ անժխտելի է. աւելի՝ որի ծնունդն է ինքը Ջուղայեցին։ Դա հետեւեալն է.—

Ինչպէս գիտենք, ԺԷ. դարի սկզբում մեր դժբախտ իրականութեան մէջ սկսուեց մի գեղեցիկ շարժում, որը կարելի է վերածնութեան շարժում անուանել։ Հայ կեանքը միանգամայն վայրենացած էր եւ խոպան — թէ՛ բարոյապէս, թէ՛ հոգեպէս, թէ՛ մտաւորապէս։ Երկու վանականներ — Սարգիս եպիսկոպոս Ամբերդցի եւ Կիրակոս երէց Տրապիզոնցի — կամենալով վերակենդանացնել վանական կեանքն ու գրականութիւնը մեզանում, երկար թափառումներից յետոյ՝ Տաթեւի մօտ հիմնեցին մի վանք, որը յայտնի է Սիւնեաց Մեծ Անապատ կամ Հարանց Անապատ անունով։

Լսելով վանքի համբաւը, շուտով Հայաստանի ամէն կողմերից այնտեղ հաւաքուեցին ուսումնածարաւ եւ վանական կեանքին նախանձախնդիր բազմաթիւ մարդիկ, պատմագրի

Դաւրիժեցուց ու մասամբ յիշատարաններից, եւ այն վաստակաւորները — հայերէն, ռուսերէն, ֆրանսերէն, լատիներէն եւ գերմաներէն — որ հրատարակել է հանգուցեալ Կ. Եղեանը իր շատ նշանաւոր «Պետրոս Մեծի յարաբերութիւնները հայ ժողովուրդի հետ, Ս. Պետերբուրգ, 1898» աշխատութեան մէջ։ Մեր այս յօդուածում մենք օգտուել ենք գլխաւորապէս այդ 3 աղբիւրներից։

ասածին պէս՝ ո՛չ միայն «աշխարհականք եւ աննշանք, այլ եւ եկեղեցականք եւ անուանի արք, վարդապետք, եպիսկոպոսք եւ քահանայք1)։ Թուենք մի քանիսի անունները.— Մովսէս վարդ. Սիւնեցի, Ներսէս վարդ. Մոկացի, Թովմաս եպիսկոպոս Տաթեւացի, Կարապետ եպիս. Էջմիածնեցի, Արիստակէս վարդ. Շամբեցի, Դաւիթ եպիս. Շամքոռեցի, Պօղոս վարդ. Մոկացի եւայլն։

Այսպիսով Սիւնեաց Մեծ Անապատը կարճ ժամանակի ընթացքում դարձաւ մէկ զօրեղ միաբանութիւն, զօրեղ թէ՛ իր գործունէութեամբը եւ թէ՛ իր անդամների թուով։ Աւելի ճիշդ՝ նա դարձաւ մէկ զօրեղ դպրոց, ուր այս մարդիկ վարժուելով ու սովորելով, դուրս էին գալիս, հիմնում էին նորանոր վանքեր ու դպրոցներ եւ ուսումն ու վանական բարոյական կեանքը տարածում երկրում։ Դաւրիժեցու վկայութեամբ՝ «Սոքա երկոքին արքս — այսինքն՝ Սարգիս եպիս. Ամբերդցի եւ Կիրակոս երէց Տրապիզոնցի — եղեն սկիզբ անապատիս (Սիւնեաց) եւ անապատս եղեւ մայր եւ ծնող ամենայն անապատաց եւ առիթ լուսաւորութեան ազգիս Հայոց»։

Սիւնեաց դպրոցի կրտսեր, բայց շատ նշանաւոր աշակերտներից էին նաեւ Փիլիպպոս Աղբակեցին եւ Առաքել վարդ. Դաւրիժեցին, երկուսն էլ մեր կեանքում չափազանց աչքի ընկնող դէմքեր, առաջինը՝ որպէս շինարար եւ լուսաւորիչ կաթողիկոս, իսկ երկրորդը՝ որպէս վստահելի եւ միակ պատմիչը ԺԷ. դարի։

Նոյն դպրոցի կրտսերագոյն եւ նշանաւոր աշակերտներից էր նաեւ Յակովբ Ջուղայեցին։ Բայց մնուած եւ վարժուած ո՛չ թէ Հարանց Անապատում, այլ Մովսէս Սիւնեցու աշակերտ Խաչատուր վարդ. Կեսարացու հիմնած դպրոցում, Նոր Ջուղայի Ամենափրկչի վանքում։

Դեռ եւս վարդապետ՝ Յակովբ Ջուղայեցին «երեւելի էր ի մէջ վարդապետացն Հայոց»։ Նրա ժողովրդականութիւնը այնքան մեծ էր, որ Փիլիպպոսի նման մեծագոյն կաթողիկոսից յետոյ նրա՛ն արժանի համարեցին կաթողիկոսական աթոռին եւ նրա՛ն ընտրեցին, որպիսի

---

1) Պատմ. Առ. վարդ. Դաւրիժեցւոյ, Էջմիածին, 1896, Գլ. ԻԱ.։